ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2020թ. № 254

06-006-0339-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԵԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, 113-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասում գտնվող 06-006-0339-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1,0 հեկտար մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահողը 1995 թվականից փաստացի տիրապետվում է Արսեն Աղաբեկի Պետրոսյանի կողմից, հիմք ընդունելով Սպիտակի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրված հողի սեփականության իրավունքի թիվ Ա 027863 պետական ակտը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Արսեն Աղաբեկի Պետրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասում գտնվող 06-006-0339-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1,0 հեկտար մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահողի ճշգրտված հատակագիծը:
2. Օրենքի ուժով ճանաչել Արսեն Աղաբեկի Պետրոսյանի (ծնված 19.02.1964թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի «Ղազանչի» հանդամասում գտնվող 06-006-0339-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 1,0 հեկտար մակերեսով 3-րդ կարգի անջրդի վարելահողի նկատմամբ:
3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2020թ. № 255

ԱՐՍԵՆ ԴԱՆԻԵԼԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ՝ ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 242 որոշմամբ վարչական վարույթում որպես վկա ներգրավված Մկրտիչ Դանիելի Դանիելյանը չի ներկայացել վարչական վարույթի քննարկմանը, ինչպես նաև Սպիտակի համայնքապետարանը չի ստացել Մկրտիչ Դանիելյանի կողմից վարչական վարույթի քննարկման ծանուցագիրը ստանալու փաստը հավաստող փոստային ծանուցագիրը՝ *որոշում եմ.*

1. Արսեն Դանիելի Դանիելյանի վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 22-ին, ժամը 16:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբերի 2020թ. № 256

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Երևանյան խճուղու վրա գտնվող 06-006-0137-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,14312 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1996 թվականին կառուցված 19,57 քառակուսի մետր մակերեսով հերթափոխի սենյակի, 19,97 քառակուսի մետր մակերեսով տնտեսական սենյակի և 101,7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի

եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականության հանդիսացող՝ Սպիտակ համայնքի Երևանյան խճուղու վրա գտնվող 06-006-0137-0032 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,14312 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված 19,57 քառակուսի մետր մակերեսով հերթափոխի սենյակը, 19,97 քառակուսի մետր մակերեսով տնտեսական սենյակը և 101,7 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 96» հասցեն:

4. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

5. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Սարգիս Յուրիկի Մաթոսյանին (ծնված 20.12.1974թ.) օրինականացված կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.սեպտեմբերի 11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբերի 2020թ. № 257

ՍԱԹԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՄԱՐԳՈ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ, ԵԼԵՆԱ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Թելման Ռաֆիկի Խառատյանի մահից հետո Սպիտակ համայնքի Կամոյի փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2014 թվականի օգոստոսի 2-ի վկայագրի փոխանցվել է Սաթիկ Սիմակի Հովհաննիսյանին, Մարգո Թելմանի Խառատյանին, Ելենա Թելմանի Խառատյանին և Լուսինե Թելմանի Խառատյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Սաթիկ Սիմակի Հովհաննիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սաթիկ Սիմակի Հովհաննիսյանին, Մարգո Թելմանի Խառատյանին, Ելենա Թելմանի Խառատյանին և Լուսինե Թելմանի Խառատյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Կամոյի փողոցի վրա գտնվող 0,065 հա մակերեսով տնամերձ հողամասին, դրա վրա գտնվող 97,4 քառակուսի մետր մակերեսով բնակելի տանը, 17,4 քառակուսի մետր մակերեսով լողարանին և 37,0 քառակուսի մետր մակերեսով գոմին տրամադրել «քաղաք Սպիտակ, Կամոյի փողոց, թիվ 9» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբերի 2020թ. № 258

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828-Ն որոշմամբ հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգի 2-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2020 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 01/111.3/09324-2020 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0508-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,001659 հեկտար այլ հողեր գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0508-0029 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,001659 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 73/2» հասցեն:

3. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը և 2-րդ կետով տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբերի 2020թ. № 259

ԺՈՐԱ ՌԱԶՄԻԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 15/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 437 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Ժորա Ռազմիկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի փաստացի չափը կազմում է 0,01532 հեկտար, հողամասի չափերի փոփոխություն երբևէ չի կատարվել, սակայն հողամասի գրանցման համար հիմք հանդիսացած «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից տրամադրված չափագրության մեջ առկա անճշտության պատճառով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24112017-06-0002 վկայականում հողամասի չափը նշվել 0,01517 հեկտար, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ժորա Ռազմիկի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ալեք Մանուկյան փողոց, թիվ 15/3 հասցեում գտնվող 06-006-0499-0052 կադաստրային ծածկագրով 0,01532 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի ճշգրտված հատակագիծը:

2. Փոփոխություն կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Ալ.Մանուկյան փողոց, թիվ 15/3 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կառույցն օրինականացնելու մասին» թիվ 437 որոշման մեջ՝ որոշման նախաբանում և 1-ին կետում նշված «0,01517» թիվը փոխարինել «0,01532» թվով:

3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2020թ. № 260

ՄԱՆՎԵԼ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանի զեկուցագիրը՝ Մանվել Ռազմիկի Թումանյանի կողմից «MERCEDES-BENZ E280» մակնիշի փոխադրամիջոցի (պետհամարանիշ՝ 18SU118) գույքահարկը վճարելու պարտավորությունները չկատարելու մասին՝ որոշում եմ.

1. Մանվել Ռազմիկի Թումանյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Մանվել Ռազմիկի Թումանյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2020թ. № 261

ԱՐՏԱԿ ԴԻԼԲԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանի զեկուցագիրը՝ Արտակ Լևոնի Դիլբարյանի կողմից «INFINITI 35 3.5» մակնիշի փոխադրամիջոցի (պետհամարանիշ՝ 87FX800) գույքահարկը վճարելու պարտավորությունները չկատարելու մասին՝ որոշում եմ.

1. Արտակ Լևոնի Դիլբարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 15:30-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Արտակ Լևոնի Դիլբարյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2020թ. № 262

ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Հենրիկ Միրզոյանի զեկուցագիրը՝ Գրիգոր Ռազմիկի Մանուկյանի կողմից «BMW 750IL» մակնիշի փոխադրամիջոցի (պետհամարանիշ՝ 33PO284) գույքահարկը վճարելու պարտավորությունները չկատարելու մասին՝ որոշում եմ.

1. Գրիգոր Ռազմիկի Մանուկյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2. Վարչական վարույթի քննարկման օր նշանակել 2020 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 15:00-ին:

3. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Գրիգոր Ռազմիկի Մանուկյանին:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 14
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«14» սեպտեմբերի 2020թ. № 263

ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 2020 թվականի սեպտեմբերի 7-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-07092020-06-0103 որոշումը, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 0,05239 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 14
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2020թ. № 264

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 179 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 179 որոշմանը կից ցուցակում Խաչիկ Արամայիսի Մաթոսյանի անվան փոխարեն սխալմամբ գրվել է «անհայտ», իսկ հողամասի մակերեսը «0,049»-ի փոխարեն սխալմամբ գրվել է «0,0350», հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 1953938 վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի նոյեմբերի 25-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան և Առափնյա փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 179 որոշմանը կից ցուցակի 81-րդ տողում նշված «անհայտ» բառը փոխարինել «Մաթոսյան Խաչիկ Արամայիսի» բառերով, իսկ «0,0350» թիվը փոխարինել «0,049» թվով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. սեպտեմբերի 15
ք. Սպիտակ